

Թշնամին նպատակ ունէր կոռուղները հոն դրադեցնելով՝ ուժ անցնել մեր ինքնապաշտպանութեան պէտքերը վրայ իրար կից չորս թուրքաբնակ տունները, որոնք դեռ կը մնային չգրաւուած եւ որոնց մէջ թուրք ընտանիքներ հոն կ'ապրէին։ Ուստի խումբ մը զինուորներ, Շահէնի գերբէն զուրս դալով, միացան իրենց ձախ թեւը պաշտպանող սղաններու հետ ու անմիջապէս ժամառով մը մտան թուրք տունները՝ ժամանակ չտալով թշնամուն հաստատուելու հոն։

Կոռուի տաք միջոցին մերոնք հանդիպեցան արդիւիչ կրակի, բայց խիզախ յանդգնութեամբ յաջողեցան և հոգի սպաննել եւ 6 կին ու երեխայ գերի բռնել, իսկ միւսները խոյս տուին Գաթիւրջի ջամին։ Գերուածներէն աղջիկ եւ երեխայ մը վիրաւորուեցան։ Անոնք Առաջնորդարան փոխադրելով պահուեցան ամէն հոգածու խնամքով։

Այդ կոռուի մէջ մեզմէ վիրաւորուեցաւ Տրչոլլի Մուրադ անուն զինուոր մը, որ դէմ առ դէմ զուրս դալով թուրքի մը՝ գնդակ ընդունեց կրծքին, բայց դարձանալիօրէն անվրտանդ, կատարը հաղիւ թափանցած էր մորթէն ներս, որով կարելի եղաւ գնդակը իսկոյն հանել, իսկ զինուորն ալ գնաց կոռուի։

Մինչեւ մայրամուտը տեւող կռիւը թըշնամու համար մնաց անհետեւանք։ Այդ օրը ունեցանք ժողովուրդէն և վիրաւորեալներ, որոնք դարձուած էին բերդի կրակներէն։

Գիշերը հասաւ։ Կառավարական Ձինապահետը հրդեհեցու ձեռնարկը պիտի իրագործուէր, որ մտանդաւոր եւ դժուարին էր միանադամայն։ Ձինապահետը կը դանդաղ թէքալէֆի Հարպիլէի դիմաց քիչ ձախ։ Երկուք ու կէս արշին քարաշէն պատերով վրան աղիւսաշար խոշոր շէնք մը կար երկրիկանի մեծ դուռներով, որմէ միայն հնարաւոր էր հրդեհել։ Ծինութիւնը չըմպատուած էր ետեւէն պարխաղով, ճակատէն եւ երկու կողերէն մէկ արշին բարձրութեամբ քարէ պատով եւ փայտեայ վանդակով։ 100 մէթրէ աւելի էր ալն բաց եւ մահահոտ ճամբան, ուրիշ մեզ ծանօթ հրձիգը անցնելով պիտի մօտենար դրան։

Բայց պէտք էր այրել։

Շրջանապետ Յարօն՝ խումբ մը զինուորներով հրձիգ Արամ Կապարուկեանի հետ առաջ անցաւ նախորդ գիշեր հրդեհուած ոստիկանատան դեռ ծխացող փլատակներու մէջ։ Սկսուեցաւ կռիւ։ Ձինուորները գիրք պահեցին, եւ հրձիգը քարիւղի պատրաստութեամբ նետուեցաւ փաւարի գիրկը, ոռնացող գնդակներու տարափին տակ։ Արդեօք պիտի յաջողինք։ Չսպաննուեցաւ։

Կռիւը սաստիկ էր։ Բայց ահա երեւաց աղօտ յոյսը։ Թշնամին զգաց։ Ո՛վ Աստուած, ի՞նչ սարսափելի հրացանաձողութիւն, ի՞նչ դոշում. «Տեպօն կ'այրեն», եանկո՛ւն։ «Գուպլէթ, խմատ», — կը սրտան ամէն կողմէ։

Տղայք սառնասիրտ կը հետեւին անցուղարձին, երբ յանկարծ յետ եկաւ Արամը շրնչասպառ։ «Վառեցի՛, տղե՛րք, վառեցի», — եւ քրտինքը ու հեւոցը կը խեղդէին զինքը։

Կրակը անցած էր ներս, աւերներ կը դործէր։ Ձինուորները խեղցնոր՝ թուրքական կրակները անտեսելով՝ իրենց հարուածները կեղբոնացուցած էին Տէպօյի դրան միայն, որ սրէպի հանդցնելու համար ծակողը դետնաթաւալ մնար։ Արդարեւ, քանի մը ժամեր վերջ խուլ որստով տապալուեցաւ շէնքի դուռը ու հրդեհն լեզուներ ժայթքեցին զուրս աւետելու վրէժի յաղթանակը։

Ա՛լ ոչ մէկ կասկած։ Շէնքը ամբողջ բռնկուեց։ Խլացնող հրացաններու որոտին եկան խառնուելու զինապահետի փամփուշտներու պայթումները, որոնք ամբողջ շէնքը փլատակի վերածեցին։

Յաջողութիւնը փառաւոր էր։ Երէկի խառոյկահանդէսը շարունակուեցաւ եւ այս գիշեր։ Այս անգամ սակայն Վանի կառավարական զինապահետն էր, որ չպրծաւ վրէժխնդիր հայ ժողովրդի այրող շանթէն։

Օսմանեան դրօշներ, զինուորական առօթներ, զէնք, փամփուշտ եւ մթերք, բոլորը վառեցան։ Մեր կողմէ ցասումի եւ ձէվաթի համար խայտառակ նշաւակի ապտակ մըն էր ալս, որ Վանի Քաղաքամէջը՝ շանթահար կիջեցնէր թշնամիի ճակատին։

ԺՈՂՈՎՐԴԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Կռիւը երկու օր բոլորեց։ Երրորդ օրն էր, որ կը սկսէր։ Ինքնապաշտպանութեան ամբողջ